


Տ. ՀԱՅՐԱՎԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՅՈՒՆ
Յ Հ Ա Կ Ե Զ Ո Ւ Խ
ՈՒՂԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դ. Ա. Գ Ի Ր Ք
ԶՈՐՅՈՒԹ ԴԱՍՏՐԱՆԻ ՀԱՄԱՐ



ՅԵՐԵՎԱՆ

Հ Ա Յ Ա Վ Տ Հ Ր Ա Տ

1940



491.99-5

2-16



ՏՈՂԲԱԶԱՐ

1005-10

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎՀԵԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դ.ՍՍ.ԳԻՐՔ
4-ՐԴ Դ.ՍՍ.ՐԱ.ՆԻ ՀԱՄԱՐ

3-ՐԴ ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ ՀՅԱՍՏԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ՀԽՍՀ ԼՈՒԺԲՈՂԿՈՄՄԱՆ ԿՈՂՄԻՑ



Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՅԵՐԵՎԱՆ

1940

12 JUL 2013

1. ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱ- ՆՈՒՄ ԱՆՑԱԾԻ

ա. ՆԱԽԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Բառերով արտահայտված յուրաքանչյուր ամփոփ
միտքը կոչվում է նախադատություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. Կարդացեք և ասացեք քանի՞ նախա-
դատությունից և կազմված:

Ամառային արձակուրդները վերջացան, դպրոցները
բացվեցին, յերեխաները ուղախուրախ գնում են դպրոց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. Արտադրեցեք և ամեն մի նախադա-
տության վերջը դրեք վերջակետ:

Վառ շղում ե աշճաճանչը,

Ծով աղմուկ ե փռղոցում,

Յեվ մանկանց ձայնն ու զիլ կանչը
Թռունդ թնդում են դպրոցում...
(Լեբեդեվ-Կումաչ)

բ. ՆԱԽԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՀԱՏ ԲՆՈՒՅԹԻ

Նախադատություններն ըստ բնույթի լինում են՝
ա) Հարցական.

բ) Հրամայական.

գ) Բացականչական.

դ) Պատմողական:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3. Քանի՞ հարցական նախադատություն
կա այս քառյակում:



Տ. ՇԱԽԲԱԶՅԱՆ
Արմանական լեզու³⁴⁶⁵
գրամматика и правописание
для IV класса
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.

Ո՞վ ես լիիզակ դու հողածին,
Ի՞նչպես մըտար իմ հողը դու,
Վ՞հնց չի հասել քո ականջին
Գոնե անունն իմ ահարկու։
(Հ. Թ.)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4. Արտագրեցնք հրամայական նախադաշտական սությունները։

— Դու կաց, հորեղբայր, դու դարդ մի անիը.
Գընա, քու ողում դու հանգիստ քընիր.
Հիմի յես կելսեմ, Սասմա դաշտ կերթամ,
Մըրա-Մելիքին պատասխան կըտամ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5. Քանի բացականչական նախադաշտական թյուն կա այս վոտանավորում։

Ա՛խ, յես յերանի
Կայծակ լինելի,
Վորոտ ճայթյունով
Մըրայլ ամպերից
Ժայթքեյլ ըմբռոտ,
Զարկեյլ ուժգին,
Պատոեյլ խավար
Կամարը յերկնի։
(Հ. Թ.)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6. Քանի պատմողական նախադաշտական թյուն կա այս քառյակում։

ԼՈՒՍՍ.ԴԵՄԻՆ

Արշալույսը վոսկեղոծ
Ծագեց հեռվից շողալով,
Խոփը մտավ հողի ծոց՝
Ակոս շարեց սողալով։

Դ. ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Միայն յենթակայով և ստորոգյալով կազմված նախադասությունները կոչվում են նամառոս նախադասություն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 7. Արտագրեցնք և յենթականների տակ մի գիծ քաշեցնք, իսկ ստորոգյալների տակ՝ յերկու գիծ։

Լույսը բացվեց, արել ծագեց, յերեխանները արշ-նացան, զանգը հնչեց, զասերն սկսվեցին։

Լույսում ունեցող նախադասություննը կոչվում երեղարձակ նախադասություն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 8. Արտագրեցնք և ամեն մի նախադասության վերջը դրեք վերջակետ։

Առվակները քչքչացին
Ուրախության կարկաչով,
Սարեր, ձորեր վողջ զուգվեցին
Մշտադալար կանաչով։
(Հ, Պողոսյան)

Դ. ԳՈՅՑԱԿԱՆ

Սուարկա ցույց տվող բառերը կոչվում են գոյականներ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 9. Արտագրեցնք միայն գոյականները։

ԼՈՒՍՍ.ԲԱՅԻՆ

Նորից յեկա այցելության
Գործարանի պարիսպներին,

Յերկաթակուռ այն շենքերին,
Վոր շունչ տվին իմ լերգերին:

Ահա մտա նրա շեմքով,
Ինձ վողջունեց արթուն սուլիչ,
Մեքենաներն ուրախացած՝
Արձակեցին յերկաթե ճիչ:

Իրար անցան ճախարակներ,
Ժիր փոկերն ու պտուտակներ,
Շոգեմուրճը հաղարտ թնդաց
Ու վորոտաց՝ դեռ չեմ հոգնել:

Նրան խմբով ճայնակցեցին
Զարանձի հաղար մուրճեր,
Ծլվալով զընդացին՝
Ինչպես ուրախ դեղձանիկներ:
(Հ. Հ.)

Կ. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Միեմույն տեսակի առարկաներից յուրաքանչյուրին տրված անունը կոչվում է հասարակ անուն, իսկ նրանցից միայն մեկին տրված անունը, մրւաներից զանազանելու համար, կոչվում է հատուկ անուն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 10. Արտագրեցնք և կետերի տեղ աջ սյունակում դրեք հատուկ անունները:

հասարակ	հատուկ
Գետ	• • • • • • • •
Մար	• • • • • • • •
Քաղաք	• • • • • • • •
Մարդ	• • • • • • • •

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 11. Առանձին սյունակներում արտագրեցնք հասարակ և հատուկ անունները:

ԸՆԿԵՐ ՅԵՐՎԱՆԴԻ

Զեր վերջին նամակով խնդրել եյիք, վոր յես գրեմ Սեվան-Զանգու կասկագի մասին: Սա շատ բարդ խնդիր է: Այդ մասին շատ ե գրված «Խորհրդային Հայաստան» և «Պրավդա» թերթերում: Դուք կարող եք կարդալ: Այս քան միայն կասեմ, վոր Զանգուն Արաքսի մի վտակն ե և իր սկզբն առնում է Սեվանա լճից, վոր 1916 մետր բարձրության վրա յե գտնվում:

Զանգուն շատ սրբնթաց ե և Խորհրդային Հայաստանի ամենասովորակար գետերից մեկն ե: Անցնելով Ծաղկունք, Քաղաքի, Սոլակ, Գյումիշ և Արգնի գյուղերից Յերեվանի մոտով գնում ե վուոգելու Արաքատյան գաշտավայրը:

Զանգուի վրա յեն շինված Յերգեսը և Քանաքեռգեսը, վորոնք ելեկտրական եներգիա յեն մատակարարում Յերեվանին, Դիլիջանին, Կիրովականին և այլ քաղաքներին, ինչպես նաև Արագածի շրջակայրի գյուղերին:

Բարեվերով Արշակ

1940 թ. վետրվարի 2-ին
Յերեւան

Պ. ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎՈՒՄ

Գոյականի այն փոփոխությունը, վորով արտահայտվում ե գոյականի պաշտոնը նախադասության մեջ, կոչվում է նոլովում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 12. Հետեւալ նախադասություններից արտագրեցնք լնդզված բառերը և նըանց դիմաց նշանակեցնք հոլով իր հարցով:

Գուրգենը գնաց դպրոց:
 Գուրգենի հագուստները մաքուր են:
 Գուրգենին նվերներ ավին:
 Գուրգենին շատ են սիրում ուսուցիչները:
 Գուրգենից զոհ են բոլորը:
 Գուրգենով պարձենում ե մեր դպրոցը:
 Քաղաքը զարդարված է:
 Քաղաքի փողոցները մաքուր են:
 Քաղաքին մոտեցավ գնացքը:
 Քաղաքը կանաչազարդեց Քաղլորհուրդը:
 Քաղաքից մեկնեցի այսոր:
 Քաղաքով անցնում ե գետը:
 Քաղաքում կան շատ գործարաններ:
 Որինակ՝

Առարկան	հարց	հոլով
Գուրգենը	ով	ուղղական

Ե. ԱԾԱԿԱՆ

Ածական են կոչվում այն բառերը, վոր ցույց
 են տալիս առարկայի վորպիսությունը, ինչպիսի լի-
 նելը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 13. Արտագրեցեք միայն ածականները:

Ա.Ռ.Վ.Վ.ՕՏԸ

Արշալուսի ցոլքերը
 Շապիկ հագան ծիրանի,
 Տեսան, թուն հավերը,
 Նրանց հաղար յերանի:

Դաշտի քնքուրչ ճաղիկը
 Բացեց թերթեր բուրավետ,
 Ցեղ վաղորդյան շաղիկը
 Ցերկինք թռավ շողի հետ:

Ու բարձրացավ թանձր մեղ՝
 Գետի փրփուր ջրերից:
 Ջրին ասավ մի յեղեգ.
 — Տես, լույս ծագեց վերկից:

(Ա.Պ. Խնկոյան)

2. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԻՆԵՐ



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 14. Կարդացեք և առացեք՝ յերկրորդ սյունակում վեր բառերն են փոխարինում Սուրբիկը և ձինորսներն բառերին:

- | | |
|--|--|
| 1. Սուրբիկը կարթով ձուկ վորսում:
2. Սուրբիկը հանկարծ ընկավ գետը:
3. Զկնորսներն ողնության հասան:
4. Զկնորսներն աղատեցին Սուրբիկին: | 1. Սուրբիկը կարթով ձուկ ե վորսում:
2. Նու հանկարծ ընկավ գետը:
3. Զկնորսներն ողնության հասան:
4. Նրանի աղատեցին Սուրբիկին: |
|--|--|

Անձերի անունների փոխարեն դրվող բառերը
կոչվում են անձնական դերանուններ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 15. Արտագրեցեք ընդգծված բառերը և ա-
սացեք՝ վորմնց փոխարեն են դրված:

Հեռախոսի մոտ խոսում ե Գրիշան իր ընկեր Աշոտի
հետ:

Լույս, Աշխատ, յես այսոր գնալու յեմ թատրոն, Դու
ուղարկում ես դալ: Արամն զբաղված ե: Նա չի կարող դալ:



Յես, դու, նա անձնական դերանուններ են:
Յես—խոսողը դնում ե իր անվան փոխարեն, և կոչ-
վում ե առաջին դեմքի դերանուն:
Դու—խոսողը գործածում ե խոսակցի անվան փոխա-
րեն, և կոչվում ե յերկրորդ դեմքի դերանուն:
Նա—խոսողը գործածում ե յերրորդ անձի անվան
փոխարեն, և կոչվում ե յերրորդ դեմքի դերանուն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 16. Արտագրեցեք հետևյալ ընդգծված բա-
ռերը:

Աշխատ, դիտես՝ քննություններն արդեն վերջաց ան:
Յես գերազանցիկ եմ: Մենք «միջակ»-ից ցած գնահատա-
կաններ չունենք: Դու խոսում ես միայն քո մասին, բայց
դա բավական չե: Դուք բոլորդ պետք ե լավ սովորեք:

Արամին տեսա. նա շատ գոհ է իր գնահատական-
ներից, բայց դասարանի առաջադիմությունն ստուգելիս
պարզվեց, վոր նրանք «միջակ»-ից ցած գնահատականներ
ունեն: Խոստացել են յեկող տարի վերացնել:

Գոյականների նման, անձնական դերանունները լի-
նում են յեզակի և նոգնակի:
Յեզակի յեն՝ յես, դու, նա:
Հոգնակի յեն՝ մենք, դուք, նրանք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 17. Արտագրեցեք հետևյալ և կետերի տե-
ղը դրեք յես, դու, նա, մենք, դուք, նրանք:
... գնում եմ դպրոց: ... գնում ես դպրոց: ... գնում ենք
դպրոց: ... գնում եք դպրոց:
... գնում ե դպրոց:
... գնում են դպրոց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 18. Հետևյալ հողվածից ջոկեցեք անձնա-
կան դերանունները:

ԴԵՊԻ Ա.ՐԱԳԱԾ

Ոգոստոսի մի ջինջ ու պայծառ առավոտ եր, յերբ
մենք սկսեցինք բարձրանալ Արագած սարն ի վեր: Մենք
ուրախ տրամադրությամբ բարձրանում եյինք, յերբ հան-
կարծ ուշադրությունս գրավեց արևածագը:

Գուրգեն, դու չես ուզում տեսնել այս սքանչելի տե-
սարանը: Նա հիացած պատասխանեց՝ ասում եյին Արա-
գածի արևածագն աննման ե, մենք չեյինք հավատում:
Տես հովիմսերը, նրանք ել հիացած են:

ա. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 19. Կետերի տեղը դրեք փակագծում յեզած անձնական գերանունները:

ՅԵԳԱԼԻ

Ուղի. . . . սովորում եմ դպրոցում:
Սեռ. . . . դասերը լես լավ եմ սովորում:
Տրակ. . . . նվերներ տվեց դիրեկցիան:
Հայց. . . . ուղարկեցին հանգստյան տուն:
Բաց. . . . գոհ են բոլորը:
Գործ. . . . պարծենում ե մեր դիրեկտորը:

Ներգ. . . . աշխատելու մեծ յեռանդ կա:

(Յես, իմ, ինձ, ինձ, ինձնից, ինձնով, ինձնում)

ՀՈԳԲԱԿԻ

Ուղի. . . . սովորում ենք դպրոցում:
Սեռ. . . . դասերը մենք լավ ենք սովորում:
Տրակ. . . . նվերներ տվեց դիրեկցիան:
Հայց. . . . ուղարկեցին հանգստյան տուն:
Բաց. . . . գոհ են բոլորը:
Գործ. . . . պարծենում ե մեր դիրեկտորը:

Ներգ. . . . աշխատելու մեծ յեռանդ կա:

(Մենք, մեր, մեզ, մեզ, մեզնից, մեզնով, մեզնում)

Առաջին դեմքի դերանվան հոլովումը

ՅԵԳԱԼԻ ՔԻՎ

ՀՈԳԲԱԿԻ ՔԻՎ

Ուղիական	յես	մենք
Սեռական	իմ	մեր
Տրական	ինձ	մեզ
Հայցական	ինձ	մեզ

Բացառական	ինձնից	մեզնից
Գործիական	ինձնով	մեզնով
Ներգոյական	ինձնում	մեզնում

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 20. Կետերի տեղը դրեք փակագծում յեզած անձնական գերանունները:

ՅԵԳԱԼԻ

Ուղի. . . . աշխատում ես գործարանում:
Սեռ. . . . գործիքները դուք խնամքով ես պահում:
Տրակ. . . . տվին ստախանովականի կոչում:
Հայց. . . . նշանակեցին ձեր բաժնի դեկավար:
Բաց. . . . շնորհակալ են բոլորը:
Գործ. . . . վոգեվորվում են բանվորները:
Ներգ. . . . նկատվում ե նվիրվածություն:
(Դուք, քո, քեզ, քեզ, քեզնից, քեզնով, քեզնում)

ՀՈԳԲԱԿԻ

Ուղի. . . . աշխատում եք գործարանում:
Սեռ. . . . գործիքները դուք խնամքով եք պահում:
Տրակ. . . . տվին ստախանովականի կոչում:
Հայց. . . . նշանակեցին գործարանի բաժինների դեկավարներ:
Բաց. . . . շնորհակալ են բոլորը:
Գործ. . . . վոգեվորվում են բանվորները:
Ներգ. . . . նկատվում ե նվիրվածություն:
(Դուք, ձեր, ձեզ, ձեզ, ձեզնից, ձեզնով, ձեզնում)

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԵՄՔԻ ԴԵՐԱՆՎԱՆ հոլովումը

ՅԵԳԱԼԻ	ՀՈԳԲԱԿԻ
--------	---------

Ուղիական	դու	դուք
Սեռական	քո	ձեր
Տրական	քեզ	ձեզ
Հայցական	քեզ	ձեզ

Բացառական	քեզնից	ձեզնից
Դործիական	քեզնով	ձեզնով
Ներգոյական	քեզնում	ձեզնում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 21. Կետերի տեղը դրեք վակագծում յեւ զած անձնական դերանունները:

Յեզակի

Ուղղ.	... աշխատում ե կոլտնտեսության մեջ:
Սեռ.	... աշխատանքը գնահատվում է:
Տրակ.	... հանձնեցին ցանքսերի հսկողությունը:
Հայց.	... նշանակեցին բրիգադիր:
Բաց.	... ստանում են աշխատանքի ծրագրերը:
Գործ.	... հպարտանում են կոլտնտեսականները:
Ներգ.	... կա մեծ յեռանդ:
(նա, նրա, նրան, նրանց, նրանից, նրանով, նրանում):	

Հոգնակի

Ուղղ.	... աշխատում են կոլտնտեսության մեջ:
Սեռ.	... աշխատանքը գնահատվում է:
Տրակ.	... հանձնեցին ցանքսերի հսկողությունը:
Հայց.	... նշանակեցին բրիգադիրներ:
Բաց.	... ստանում են աշխատանքի ծրագրերը:
Գործ.	... հպարտանում են կոլտնտեսականները:
Ներգ.	... կա մեծ յեռանդ:
(նրանք, նրանց, նրանց, նրանց, նրանցից, նրանցով, նրանում):	

Յերրորդ դեմքի դերանվան նոլովումը

Յեզակի հոգնակի

Ուղական	նա	նրանք
Սեռական	նրա	նրանց
Տրական	նրան	նրանց

Հոյցական	նրան	նրանց
Բացառական	նրանից	նրանցից
Գործիական	նրանով	նրանցով
Ներգոյական	նրանում	նրանցում:

Անձնական դերանունների տրական և հայցական հոլովներն իրար նման են թե յեզակիում և թե հոգնակիում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 22. Համեմատեցեք անձնական դերանունների հոլովները գոյականների հոլովների հետ և առացեք, վոր հոլովներն իրար նման են իրենց վերջավորություններով:

Յեզակի	Հոգնակի		Հոգնակի	
	Դերա- նուն	Գոյական	Դերա- նուն	Գոյական
Ուղղ.	Յես	Քար	Մենք	Քարեր
Սեռ.	Իմ	Քարի	Մեր	Քարերի
Տրակ.	Ինձ	Քարի	Մեզ	Քարերի
Հայց.	Ինձ	Քար	Մեզ	Քարեր
Բաց.	Ինձնից	Քարից	Մեզնից	Քարերից
Գործ.	Ինձնով	Քարով	Մեզնով	Քարերով
Ներգ.	Ինձնում	Քարում	Մեզնում	Քարերում

Անձնական դերանունների բացառական, դործիական և ներգոյական հոլովների վերջավորությունները նման են գոյականների նույն հոլովների վերջավորություններին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 23. Կետերի տեղը գրեցեք փակագծում տրված անձնական դերանունները պահանջված հոլովով:
... (յես), ... (դու), ... (նա) գնահատականները
դերագանց են: ... (յես), ... (դու) և ... (նա) գրքեր

Նվիրեցին: . . . (յես), . . . (դու) և . . . (նա) սիրում են բոլոր
ուսուցիչները: . . . (յես), . . . (դու) և . . . (նա) որինակ
են վերցնում: . . . (յես), . . . (դու) և . . . (նա) պարծե-
նում են: . . . (յես), . . . (դու) և . . . (նա) մեծ փոփո-
խություն ե կատարվել:

Որինակ՝ իմ, քո և նրա գնահատականները գերա-
զանց են:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 24. Հետեւյալ հոդվածն արտագրեցէք յեր-
կու անգամ: Առաջին դեմքի անձնական դերանունների փոխարեն
դրէք յերկը որդի դերանունները:

Յեզակի

Յես գնում եյի դպրոց: Ճանապարհին իմ գիրքը կո-
րավ: Հանկարծ ինձ հանդիպեց ընկերունիս. նա ինձ շատ
եր սիրում և ինձնից չեր ուզում հեռանալ: Նա ինձնով
պարծենում եր, վորովինեաև ինձնում տեսնում եր վորոշ
արժանիքներ:

Հոգնակի

Մենք գնում ելինք դպրոց: Ճանապարհին մեր գրքերը
կորան: Հանկարծ մեզ հանդիպեց ընկերունիս, նա մեզ շատ
եր սիրում և մեզնից չեր ուզում հեռանալ: Նա մեզնով
պարծենում եր, վորովինեաև մեզնում տեսնում եր վորոշ
արժանիքներ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 25. Հետեւյալ հոդվածից ջոկեցէք դերանուն-
ները և դիմացը նշանակեցէք հոլովը, դեմքը և թիվը:

ՄԻ ՔԱՆԴԵՔ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԲՆԵՐԸ

Սուրեկը վորոշել եր թոշունների ձվեր հավաքել:
Անտառի ճանապարհին նա պատահեց Թուբիկին և
ասաց:

— Յես ու դու միասին անտառը տակն ու վրա կա-
նենք: Ինքդ այդ լավ գիտես:

Նրանք այսպես խոսելով հասան անտառ:

Հանկարծ լսվեց անտառապահի ձայնը.

— Սպասեցնք, դուք դարձյալ թոշուններին նեղաց-
նելու յեք գնում: Յես յերեկ ձեզ չասացի, վոր դուք թը-
շուններին հանգիստ թողնեք: Բացի ոգուտից նրանք մեզ
ինչ մնան են տվել: Թոշունները մեր բարեկամներն են, և
նրանց ապահովության համար մենք պիտի շահագրգոված
լինենք: Իսկ յեթե նրանց ձվերն ալսոր յես հավաքեմ,
վաղը՝ դու, մյուս որը՝ նա, ապա կարճ ժամանակից հետո
անտառում այլևս թոշուն չենք ունենաւ:

Յերեխաններն ամոթահար տուն վերադարձան:

Որինակ՝ նա. ուղղ. հոլով, Յ-րդ դեմք, յեզակի թիվ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 26. Արտագրեցէք հետեւյալ նամակը և
ընդգծեցէք Դուք, Զեզ, Զեր, Զեզնից քաղաքավարական ձեռքը:


ՍԻՐԵԼԻ ՈՒՍՏՈՒՑԻՉ

Ստացա Զեր ուղարկած բացիկը: Դուք գրում եք,
վոր պետք ե լուրջ ուշադրություն գարձնել դպրոցական
պարապմունքների վրա: Շուտով յես Զեզ կուղարկեմ իմ
գնահատականները, վարից Դուք կիմանաք, թե վոր չափով
յես կատարում եմ Զեր խորհուրդները: Զեզ բարեկում են
բոլոր դասընկերներս, վորոնք Զեզնից քաղցր հիշողություն-
ներ ունեն:

Բարեկերով՝ ԿՈՐՅՈՒՆ

Մեկին հարգանք ցույց տալու համար գործա-
ծում են՝ Դուք, Զեզ, Զեր, Զեզնից բառերը. սրանք
քաղաքավարական ձեռք են և դրվում են մեծատառով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 27. Հետեւյալ հատվածից ընտրեցէք անձ-
նական գերանունները և կազմեցէք նախադասություններ:
«Ուր ել զնաք, ականջ դբեք ժողովրդի սրտի ձայնին,
Հաճախ սիրով նրան ականջ մեջ գտ և անխառն նրա գինին,



Յեվ պարտիզան խմբերը վողջ վարելք հղոր ձեր զորքի հետ,
Նրանց մեջ եւ ուժը հողի, ով հսկաներ ամենագետ:
Թռեք, փռեք ամենուրեք տղրուկ ու նենդ չար թշնամուն,
Վառեք արնոտ ցեղը նրա, մոխիրն ամեն ավեք քամուն...»

Դեմք յելավ մի սուրհանդակ՝ փախած ցարի սև բանակից:
— Մենք եւ անհող, աղքատ մարդիկ, ցարը զոռով եւ մեզ
բերեր
Հիմա դիտենք, թե դյուցադունն ում համար եւ կռվի յելել:
Ձեր զենքերն են յեղան ու թուր, մենք բերել ենք զենք
ու զրահ:
Հանձնվում ենք ձեր հավատին՝ կռվի լենենք ցարի վրա:
Ասին նրանք, և Ստալին դյուցազնն ուրախ ու լուռ

Խորհեց,

Արևի պես նա ժպտալով նրանց մի ալ դրոշ տվեց,
Զորքը նորից առաջ վարեց դեսի լենին դյուցազնը մեծ:


(Հ. Շիրազ)

Որինակ՝ նրա դրքերը նոր են:

3. Բ Ա Յ


ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 28. Հետևյալ բառերը կարդացեք նկարների
կարգով այսպես, վոր իմացվի, թե ի՞նչ ե անում կամ ի՞նչ ե
լինում ամեն մեկը:

Յատկում ե, փորում ե, կոտրում ե, վազում ե, վառ-
վում ե, յեռում ե, փախչում ե, սղոցում ե, վարում ե:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 29. Կատարած զործովություններով իմաշ
ցեղ առարկաները և նրանց անունները գրեցեք կհաների տեղը:
(Բանավոր)

• • • • մայում ե:	• • • • դայլայլում ե:
• • • • մոնչում ե:	• • • • բացվում ե
• • • • բառաջում ե:	• • • • ծաղկում ե:
• • • • վրնջում ե:	• • • • հոսում ե:
	• • • • ծագում ե:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 30. Արտադրեցեք և ընդգծեցեք այն բառները, վորոնք ցույց են տալիս, թե ինչ են անում առարկաները: Նրանց մոտ փակագծի մեջ գրեցեք և հարցերը:

Առյուծը մոնչում ե: Գայլը վոռնում ե: Խոզը խորդում ե: Արագիլը կափկափում ե: Սոխակը դայլայլում ե: Սարյակը ճովողում ե: Բուն վայում ե: Կոռուկը կոկում ե: Կաչաղակը կչկչում ե: Ճնճղուկը ճովողում ե: Արջը մըթմըթում ե:

Որինակ՝ Առյուծը (ինչ ե անում) մոնչում ե:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 31. Արտադրեցեք կետերի տեղը զնելով փակագծում տրված բառերը և առացեղք՝ ինչ են լինում առարկաները:

Տերեւը դեղնում ե: Զուրը . . . : Սառույցը . . . : Ծառը . . . : Թումբը . . . : Գեար . . . : Պտուղը . . . : Ծաղկիլը . . . : Վամին . . . : Ցերկինքը . . . : Անձրեւը . . . : Ցերկիրը . . . :

(գոլորշիանում ե, հոսում ե, ծաղկում ե, կանաչում ե, տեղում ե, պայմում ե, վառվում ե, պտտվում ե, հալվում ե, փշում ե, վորսառում ե, հասունանում ե):

Այն բառերը, վօրոնք ցույց են տալիս առարկայի ինչ լինելը կամ ինչ անելը, կոչվում են բայ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 32. Արտադրեցեք հետեյալ վոտանավորը և ընդգծեցեք բայերը:

ԼՐԻՍԻՆԸ

Գիշերվա մթնում	Ենի նա արտերին
Արտերն են ծփում,	Ասում ե կարծես՝
Լուսինը վերից	Կգա առավոտ,
Ժպտում ե նորից:	Կշողա արե,
Շողում ե կրկին	Կայցելեն ձեղ մոտ
Դեժքով ժպտերես.	Ծրակառը ու կոմբայն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 33. Հետեյալ վոտանավորից արտադրեցեք միայն բայերը:

Կապույտ ծովը և ալեկոծվում,
Յեկ շնչում են հովերը զով,
Իսկ մենք լողում ենք շատ հեռու,
Սավաննում ենք նոր բարձրունքով:
Գհում ենք մենք տուաջ անահ,
Ինչպես արել՝ յերկնքում,

Կառուցում ենք մարտեն, դոժիա,
Մեծ զավոդներ ենք վեր ձգում:
(Յանկա Կուպալա)

ա. ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 34. Արտագրեցէք միայն գերանունները և
բայերը:

ՅԵՂԱԿԻ	ՀԱԳԱԿԻ
Յես գնում եմ դպրոց:	Մենք գնում ենք դպրոց:
Դու գնում ես թատրոն:	Դուք գնում եք թատրոն:
Նա գնում ե կինո:	Նրանք գնում են կինո:
Յես կարդում եմ գիրք:	Մենք կարդում ենք գիրք:
Դու կարդում ես նամակ:	Դուք կարդում եք նամակ:
Նա կարդում ե թերթ:	Նրանք կարդում են թերթ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 35. Արտագրելիս կետերի տեղը դրեք խա-
ղում եմ բայը՝ համապատասխան վերջավորություններով:

Յես . . . (ի՞նչ եմ անում)	Մենք . . . (ի՞նչ ենք անում)
Դու . . . (ի՞նչ ես անում)	Դուք . . . (ի՞նչ եք անում)
Նա . . . (ի՞նչ ե անում)	Նրանք . . . (ի՞նչ են անում)


ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 36. Հետևյալ հոդվածի մեջ յես, դու, նա
անձնական դերանունները փոխարինեցէք մենք, դուք, նրանք դեր-
անուններով և ընդգծեցէք բայերի վերջավորությունները:

Յես գնացի դպրոց, դու գնացիր տուն, իսկ նա գնաց
կինո: Յես դպրոցից յեկա տուն, դու կինոյից յեկար դըպ-
րոց, իսկ նա կինովից յեկավ տուն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 37. Հետևյալ նախադասություններն ար-
տագրեցէք՝ մենք, դուք, նրանք դերանունները փոխելով յես, դու,
նա դերանուններով:

Մենք աշխատում ենք հանդում:
Դուք աշխատում եք գործարանում:
Նրանք աշխատում են հանքերում:
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 38. Հետևյալ նախադասություններն ար-
տագրեցէք՝ դարբին, հյուսն և կոմբայն բառերը հոգնակի գարձ-
նելով:

Դարբինը շիկացնում ե, կուռմ ե և կովում ե:
Հյուսնը կարում ե, տաշում ե և շինում ե:
Կոմբայնը հնձում ե, կալսում ե և գտում ե:
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 39. Արտագրեցէք՝ կետերի տեղը դնելով
համապատասխան բայեր:



ՀՅՈՒՍՆ, ՏՐԱԿՏՈՐԻՍԼ ՅԵՎ ԱՇԱԿԵՐՏԸ
Հյուսնը տրակտորիսլն ասում ե՝ «Յես . . . տախ-
տակը, դու . . . արար, իսկ նա (աշակերտը) . . . դասը»:
Աշակերտը հյուսնին ասում ե՝ «Յես . . . դասը, դու
. . . տախտակը, իսկ նա (տրակտորիսլը) . . . արար»:
Տրակտորիսլն աշակերտին ասում ե՝ «Յես . . . ար-
ար, դու . . . դասը, իսկ նա (հյուսնը) . . . տախտակը»:

Բայերի վերջավորությունները փոփոխվում են և
թվով ու դեմքով համաձայնվում են՝ անձնական դե-
րանուններին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 40. Հետեւալ հոդվածն արտադրեցք յերկու անգամ՝ առաջին անգամ յես գերանունը փոխարինեցեք դաւ գերանունը, իսկ յերկրորդ անգամ՝ նաև գերանունը:

ՅԵՍ ԻՆՉՊԵՍ ԵՄ ԱՆՑԿԱՅՆՈՒՄ ՈՐՄ

Առավոտյան յես արթնանում եմ, հագնվում, լվացվում, սանրվում, ապա նախաճաշում եմ և գրքերս վերցրած գնում եմ դպրոց։ Դպրոցում լսում եմ ուսուցիչներին, ակտիվ կերպով մասնակցում եմ դպրոցական պարագմունքներին։

Դասերից հետո մի ժամով գնում եմ ընթերցաբան, կարդում եմ և վերադառնում առն՝ ցերեկվա ժամի յերկուսին։ Ժամի յերեքին ճաշում եմ, մի ժամ հանդստանում եմ, վորից հետո գնում եմ զբոսանքի։ Զբոսանքից հետո գնում եմ պիոներական ջրկատի պարագմունքներին։ Յերեկոյան նորից պատրաստում եմ դասերս, ընթրում եմ և քնում եմ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 41. Շղագրով տպված բառերի տեղը գրեցք փակագծերում յեղած բառերը և բայերը փոփոխեցեք ինչպես հարկավոր եք։

Դու սիրում ես լողալ (յերեխաները)։ Զինորսները ձուկ են բռնում (մենք)։ Յերեխաները մարմնամարզությամբ են զբաղվում (դուք)։ Ձիերը հոգնածությունից ծանր են շնչում (դու)։ Աւակերտները վաղ առավոտյան դպրոց են գնում (նա)։ Բանվորներն առավոտյան աշխատանքի յեն գնում (յես)։ Աւակերտները դպրոցում սովորում են (դու)։ Կոլտնեսականները դաշտում աշխատում են (նա)։ Յես այսոր քաղաք եմ գնալու (ուսուցիչները)։ Պիոներները լադեր են գնում (նա)։ Հովիվները սարն են բարձրանում (դու)։ Աղջիկները ծաղիկ են հավաքում (նա)։ Տղաները խաղում են (յես)։ Վորմնադիրները շարում են (դու)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 42. Հետեւալ վոտանավորից ջոկեցք բայերը և վորոշեցք նրանց թիվը ու դեմքը։

Հովիվ, հովվուհի նստոտած շարքով՝
կթում են ուրախ և անհոգ խնդում,
Յերեքն ել այրված անուշիկ յերգով
Սեր են զարթեցնում մեկմեկի սրտուն։
Վերջացավ արդեն վոչխարի կիթը,
Կաթսաներ տարան թարմ կաթնով լիքը։
Մեկն ել գդակը շարժելով ոգում,
Դեռ գառնարածին՝ «հեյ, յեկ» ե կանչում։
Յերկար չանցնելով, սարի գագաթին՝
Քամների կայտառ հոտը յերեաց։
Խառնվելով նրանք մայրերի հոտին՝
Բերկրանքի հույզով մայում են ցրված։
Կանչում են, բայում գառն ու մաքին,
Անուշ ձայներով փնտում են միմյանց։
Վորը գտնելով իրա գառնուկին՝
Ծծել ե տալիս, փայելով սրտանց,
Վորը խաղում ե մոր հետ կուշտ փորով,
Վորն ել մնում ե տխուր մայելով։
Յեկ ամեն անգամ գառը մեր տալիս
Կարծեռ թե անուշ համերգ են տալիս։

(Վ. Միքայելյան)


Բ. ԲԱՅԻ ՆԵՐԿԱ, ԱՆՑՅԱԼ ՅԵԿ ԱՊԱՌՆԻ
ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 43. Հետեւալ նախադասությունները կարգացներ համապատասխան նկարների կարգով։



Մեքենան հնձեց, մեքենան հնձում է, մեքենան հընձելու յեւ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 44. Շինել և սղոցել բայերով կազմեցնք նկարների բովանդակությանը համապատասխանող նախադասություններ:



Բայերը կարող են ունենալ ներկա, անցյալ և ապառնի ժամանակների ձևեր:

Ներկա ժամանակը ցույց ե տալիս, վոր գործողությունը կատարվում է հիմա, այսինքն խոսելու ըովելին:

Անցյալ ժամանակը ցույց ե տալիս, վոր գործողությունը կատարվել է անցյալում, այսինքն խոսելու ժամանակից առաջ:

Ապառնի ժամանակը ցույց ե տալիս, վոր գործողությունը կատարվելու յեւ հետո, այսինքն՝ խոսելու ժամանակից հետո:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 45. Զեր տեսրակներում հետեյալ որինակի ձևով տվեք խաղալ, պարել և յերգել բայերի յերեք ժամանակները:

Ն Ե Ր Կ ա շ	Ա ն ց յ ա լ	Ա պ ա ռ ն ի
Յես կարդում եմ	Յես կարդացի	Յես կարդալու յեմ
Յես գնում եմ	Յես գնացի	Յես գնալու յեմ
Յես հագնվում եմ	Յես հագնվեցի	Յես հագնվելու յեմ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 46. Արտագրեցնք լրացնելով անցյալ և ապառնի ժամանակները:

Ն Ե Ր Կ ա շ	Ա ն ց յ ա լ	Ա պ ա ռ ն ի
Կառուցում եմ	• • • • •	• • • • •
Սովորում եմ	• • • • •	• • • • •
Հետաքրքրվում եմ	• • • • •	• • • • •
Ոժանդակում եմ	• • • • •	• • • • •

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 47. Հետեյալ բայերը դառավորեցնք յերեք ոյունակներում ըստ գործողության ցույց տված ժամանակի:

Յես կարդացի: Յես կարդում եմ: Յես կարդալու յեմ:
Յես գըելու յեմ: Յես գըեցի: Յես գըում եմ: Դու գնում
ես: Դու գնալու յես: Դու գնացիր: Դու խաղալու յես:
Դու խաղացիր: Դու խաղում ես: Նա յերգում եւ: Նա յեր-
գելու յե: Նա յերգեց: Նա վազեց: Նա վազում ե: Նա վա-
զելու յե:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 48. Արտագրեցնք միայն դերանունները և
բայերը:

Յես գնում եմ Թբիլիսի:
Դու գնում ես Բագուտ:
Նա գնում ե Մոսկվա:

Մենք գնում ենք Թբիլիսի:
Դուք գնում եք Բագուտ:
Նրանք գնում են Մոսկվա:

ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 49. Հետեյալ ձեռվ խոնարհեցնք սովորել,
պատմել և նկարել բայերը.

Յեզակի
Խաղում եմ
Խաղում ես
Խաղում ե

Հոգնակի
Խաղում ենք
Խաղում եք
Խաղում են

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 50. Արտագրեցնք միայն դերանունները
և բայերը:

Յես գնացի Թբիլիսի:
Դու գնացիր Լենինգրադ:
Նա գնաց Խարկով:

Մենք գնացինք Թբիլիսի:
Դուք գնացիք Լենինգրադ:
Նրանք գնացին Խարկով:

ԱՆՑՑԱԼ ԺԱՄԱՆԱԿ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 51. Հետեյալ ձեռվ խոնարհեցնք պատմել,
նկարել և շարադրել բայերը:

Յեզակի
Խաղացի

Հոգնակի
Խաղացինք

Խաղացիը
Խաղաց

Խաղում եյի
Խաղում եյիը
Խաղում եր

Խաղացիք
Խաղացին

Խաղում եյինք
Խաղում եյիք
Խաղում եյին

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 52. Արտագրեցնք միայն բայերը:

Յես գնալու յեմ դպրոց:
Դուք գնալու յես թատրոն:
Նա գնալու յե ակումբ:

Մենք գնալու յենք դպրոց:
Դուք գնալու յեք թատրոն:
Նրանք գնալու յեն ակումբ:

ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 53. Հետեյալ ձեռվ խոնարհեցնք նկարել,
պատմել և սղցել բայերը:

Յեզակի
Խաղալու յեմ
Խաղալու յես
Խաղալու յե

Հոգնակի
Խաղալու յենք
Խաղալու յեք
Խաղալու յեն

**Զայնավորով վերջացած բառերին հաջորդող միա-
վանկ ոժանդակ բայերից առաջ յ ե գրվում:**

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 54. Հետեյալ հոգվածից ընտրեցնք բայերը
և գրեցնք յերեք սյունակներում ըստ ժամանակների:

Սուրբիկը սենյակը մաքրեց, նստեց ու սկսեց գիրք
կարգալ: Ներս մտավ Սուրբիկի ընկերը՝ Սաշան, և ասաց.
«Դրսում յերեխաները ձնագնդի յեն խաղում և չմուշկնե-
րով սղցում են»: Նրանք ել գնացին և մասնակցեցին խա-
ղին:

Նրանք ասացին. «Վաղը նորից գալու յենք, նորից խա-
ղալու և ուրախանալու յենք»: Յերեխաները շատ ուրա-
խացան, շարք կանգնեցին և վերադարձան դպրոց:

Բայի փոփոխութեան ըստ դեմքերի, թվերի և ժամանակների կոչվում է խոնարհում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 55. Զոկեցեք բայերը և դարձրեք ներկա ժամանակ։

ՀԱՌԱՋԱԿԱՆԻ

Մըթնեց։ Ծերունին լուռ չարչարանքով
Մի քանի կոճղեր գըրեց կըրակին,
Նորից բարեեց իր յերկրի կարգով
Ու բարի մաղթեց ջահել դոնապին։

Ու նստուեցինք իրար դեմ ու դեմ
Սաստկությամբ վառվող կրակի շուրջը,
Մեր առջև ձորն ե թըշշում խավարչտին,
Մեր դեմը խաղում ձորերի շունչը։
(Հ. Թ.)

ՈՐԻՆԱԿ՝ մթնեց—մթնում եւ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 56. Զոկեցեք բայերը և դարձրեք անցյալ ժամանակ։

Գոռում են, դողում թմլա ձորերը,
Կանգնած ե թաթուլ Շահի հանդիման։
Զարկում են, զարկվում դուշման զորքերը,
Արյունը հոսում են Քոի նման։
(Հ. Թ.)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 57. Զոկեցեք բայերը և դարձրեք ապառնի ժամանակ։

Պտույտ ե դալի չքնաղ տիրունին,
Անցնում ե, հոկում սեղաններն ամեն,
Հորդորում, խնդրում, վոր ուրախ լինին,
Վոր լիքն ու առաջ բաժակներ քամեն։
(Հ. Թ.)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 58. Հետևյալ հատվածից ջոկեցեք բայերը՝ փոխելով նրանց թիվը և ժամանակը։

Ծագում ե մանուկ արել գարնան
Կովկաս լեռների ձյունի պատնեշից,
Զարթնում են մեկմեկ սարերն աննման
Զմրան անվրդով քնի մշուշից։
Ահա կալվարի վիթխարի ուսին
Բազմում ե արփին թարմացած ուժով,
Սարեր ու ձորեր իրար յերեսին
Նայում են, ժպտում ամպի մշուշով...
Վերջին ձյուներն ել արդեն հալ ընկան,
Սրտասվեց իսկույն լեռների հսկան,
Սմեն մի ձորից աղբյուր ե հոսում,
Սմեն մի թփից բլբուլ ե խոսում։
(Վ. Միքայել)

ՈՐԻՆԱԿ՝ ծագում ե—ծագեցին, ծագելու յեն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 59. Զոկեցեք բայերը և փոխեցեք նրանց դեմքն ու ժամանակը։

Զարկում են, զարկվում դուշման զորքերը,
Արյունը հոսում են Քոի նման։
Ցերգում ե աշուղն իր Շահի սերը,
Անհուն զանձերը ու փառքն անսահման...
(Հ. Թ.)

Լսում ե մատաղ Թմլա տիրունին.
Ցեվ վրդովում են իր միտքը թագուն
Դավաճան գործի ամոթը խորին
Ցեվ արքայական փառքն ու մեծություն...
(Հ. Թ.)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 60. Ինքներդ կազմեցեք յերեք նախաղտառություն ներկա ժամանակով, յերեք նախադասություն անցյալ ժամանակով, յերեք նախադասություն ապառնի ժամանակով:

Զեր կազմած նախադասությունների մեջ գործածեցեք հետևյալ բայերը՝ կտել, կարել, տաել, վագել, գնալ, խաղալ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 61. Հետեյալ ձևով խոնարհեցեք սովորել, նկարել, պատմել, կարդալ բայերը:

Ն Ե Ր Կ Ա	Ա Ն Գ Ջ Ա Լ	Ա Պ Ա Ռ Ա Ն Ի
Յես գրում եմ	Յես գրեցի	Յես գրելու լեմ
Դու գրում ես	Դու գրեցիր	Դու գրելու յես
Նա գրում ե	Նա գրեց	Նա գրելու յե
Մենք գրում ենք	Մենք գրեցինք	Մենք գրելու լենք
Դուք գրում եք	Դուք գրեցիք	Դուք գրելու յեք
Նրանք գրում են	Նրանք գրեցին	Նրանք գրելու լեն

Ն Ե Ր Կ Ա	Ա Ն Գ Ջ Ա Լ	Ա Պ Ա Ռ Ա Ն Ի
Յես գրում եյի	Յես պիտի գրեմ	
Դու գրում եյիր	Դու պիտի գրես	
Նա գրում եր	Նա պիտի գրի	
Մենք գրում եյինք	Մենք պիտի գրենք	
Դուք գրում եյիք	Դուք պիտի գրեք	
Նրանք գրում եյին	Նրանք պիտի գրեն	

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 62. Հետեյալ վոտանավորից ջոկեցեք բայերը և փոխեցեք նրանց թիվը:



Աշունն ել յեկավ Գուգարք աշխարհում,
Սարին ու դաշտին այլ կյանք ե յեռում.
Խուզելով գառան, վոչխարի բուրդը,
Քոչել են բինեն, թողնելով յուրդը.

Լեռներից զվարթ գիրացած հոտեր
Չմեռվան համար իջել են դաշտեր:
Յուրդերը դատարկ սեխն են տալիս,
Աղբյուրը ու ծաղիկ վողբում են, լալիս.
Մենակ խաղում ե, թռչկոտում պախրան,
Սարեր ու ձորեր մնացին նրան:
Արծիվն ել տիսուր նատած ժայռերին՝
Վորսնը ե փնտուում իր սոված փորին:

(Վ. Միքայելյան)

ՊԱՅԻ ԺԽԾԱԿԱՆ ԶԵՎՈՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 63. Ի՞նչ տարբերություն կտ աջ ու ձախ սյունակներում գրվածների միջև:
Նրանք համապատասխանում են նկարների բովանդակութեանը:



Դ Խ Տ Վ Կ Ա Բ

Զյունն արդեն հալվեց:
Խոտը կանաչում ե ամեն
տեղ:

Ծառերը ծաղկում են:
Ծաղիկները բացվում են:
Յերգում են թռչունները:
Գարունն արդեն յեկել ե:

Զյունը դեռ չի հալվել:
Խոտը դեռ չի կանաչել ա-
մեն տեղ:

Ծառերը չեն ծաղկել:
Ծաղիկները չեն բացվել:
Թռչունները չեն յերգում:
Գարունը դեռ չի յեկել:

Բայի ժխտական ձևը ցույց եւ տալիս, վոր գործողությունը հերքվում եւ, մերժվում եւ:

Բայը ժխտական ձևի դարձնելու համար ավելացվում եւ չ մասնիկը, վորը գրվում եւ բայի կամ ոժանշգակ բայի առաջից:

Որինակ՝ կարդար, չկարդար, ուտել, չուտել, տեսա, չտեսա, ծաղկել են, չեն ծաղկել և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 64. Հետեյալ ձեռվ խոնարհեցնք զրել և նվազել բայերը:

ՆԵՐԿԱ

ԴՐԱԿԱՆ	ԺԻՄԱԿԱՆ
Կարդում եմ	Չեմ կարդում
Կարդում ես	Չես կարդում
Կարդում ե	Չի կարդում
Կարդում ենք	Չենք կարդում
Կարդում եք	Չք կարդում
Կարդում են	Չեն կարդում

ԱՆԳՅԱԼ

ԴՐԱԿԱՆ	ԺԻՄԱԿԱՆ
Կարդացի	Չկարդացի
Կարդացիր	Չկարդացիր
Կարդաց	Չկարդաց
Կարդացինք	Չկարդացինք
Կարդացիք	Չկարդացիք
Կարդացին	Չկարդացին

Ս. Ա Մ Ա Կ Ի

ԴՐԱԿԱՆ	ԺԻՄԱԿԱՆ
Կարդալու յեմ	Չեմ կարդալու
Կարդալու յես	Չես կարդալու
Կարդալու յե	Չի կարդալու
Կարդալու յենք	Չենք կարդալու
Կարդալու յեք	Չք կարդալու
Կարդալու յեն	Չեն կարդալու

Բայերը ժխտական ձեռվ խոնարհելու ժամանակ ոժանշգակ բայը (եմ, ես, ե, ենք, եք, են, եիր, եյիր, եր, եյնք, եյիք, եյին) առաջ ե ընկնում և իր սկզբից ունենում եւ չ ժխտական մասնիկը:

Յեղակի յերրորդ գեմքի և ոժանշգակ բայը ժխտական ձևի խոնարհման ժամանակ փոխվում եւ և դառնում չէ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 65. Արտադրեցնք հետեւալ հոդվածը՝ ամեն մի բայի առաջ դնելով չ ժխտական մասնիկը, և ասացնք՝ կհամապատասխանի՞ արդյոք պատմվածքի բովանդակությունը «Ամառ» վերնագրին:

Ս. Մ Ա. Ռ

Արել խանձում եւ, հունձը հասունանում եւ, խոտը հնձում եւ Խոտհարքներում զերանդիսերը շաչում են: Կոլտնտեսականների անսառունները սարն են. բարձրանում: Լեռները կանաչում են, այգիներում խաղողը հասունանում եւ Յերեխանները լողանում են գետերում ու ճերում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 66. Հետեյալ հոդվածից և քառյակներից ջոկեցնք ժխտական բայերը:

Յերվանդն այսոր իր դասելը չեթ սովորել զրա համար դպրոց չգնաց: Նա արդեն չի ուզում գնալ վորով-նետև դասագրքեր չունի և չի ել ցանկանում զնել: Նա չի ուզում սովորել և կանոնավոր չի հաճախում դպրոց: Հար-կավոր ե դաստիարակչական միջոցներ ձեռք առնել վոր-պեսղի նա չխուստի սովորելուց:


— Չելավ, եղ չելավ,
չվեր չի գցել դեռ,
Մոսին թու ելավ—
Խոզապարկուկ եր . . .
(Հ. Թ.)

Ինձ չես լսում,
Չես ափսոսում,
Ել չես ասում՝
Ի՞նչ կրինեմ յես . . .
(Հ. Թ.)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 67. Ինքներդ կազմեցնք հինգ նոխադա-
սություն ժխտական բայցու:

Դ. ԲԱՅԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԶԵՎԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 68. Կարդացնք աշու ձախ ոյունակնե-
րում գրվածը և ասացնք՝ ի՞նչ տարբերություն կա նրանց միջև:



- | | |
|---|--------------------------------------|
| 1. Պատրաստում ես քո
դասերը: | 1. Պատրաստիք քո դա-
սերը: |
| 2. Պատրաստում եք ձեր
դասերը: | 2. Պատրաստեցնք ձեր
դասերը: |
| 3. Գնում ես աշխատանքի: | 3. Գնացն աշխատանքի: |
| 4. Գնում եք աշխատան-
քի: | 4. Գնացնք աշխատան-
քի: |
| 5. Կարդում ես գեղար-
վեստական գրքեր: | 5. Կարդա գեղարվեստա-
կան գրքեր: |
| 6. Կարդում եք գեղար-
վեստական գրքեր: | 6. Կարդացնք գեղարվե-
տական գրքեր: |

Բայի այն ձեր, վոր ցույց ե տալիս, թե խո-
սողն իր խոսակցին հրամայում, խնդրում կամ խոր-
հուրդ ե տալիս՝ մի բան անել կամ լինել կոչվում ե
հրամայական:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 69. Հետեյալ ձեռք խոնարհեցնք վազել,
խաղալ, գնալ, խոսել բայերը:

Դրական ձեվ	Հրամայական ձեվ
Յես կարդում եմ	• • • • • •
Դու կարդում ես	Դու կարդա
Նա կարդում ե	• • • • • •
Մենք կարդում ենք	• • • • • •
Դուք կարդում եք	Դուք կարդացնք
Նրանք կարդում են	• • • • • •

Բայի հրամայական ձեն ունի միայն յերկըորդ
գեմք՝ յեղակի և հոգնակի թվերով: Հրամայական ձեի
վերջին ձայնավորի վրա շեշտ ե դրվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 70. Հետևյալ՝ պարբերություններն արտաշուրելիս ընտրեցնք բայերի հրամայական ձևերը և կազմեցնք ինքնուրույն նախադասություններ։

Դավիթն ել ահա սարի գագաթին
Կանգնած գոռում ե վիշապի նման。
— Ով քնած եք՝ արթուն կացեք,
Ով արթուն եք՝ լելեք, կեցեք,
Ով կեցել եք՝ զենք կապեցեք,
Զենք եք կապել, ձի թամբեցեք,
Ձի յեք թամբել, յելեք, հեծեք,
Հետո չասեք, թե մենք քնած—
Դավիթ գող-գող յեկավ, գնաց։

(Հ. Թ.)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 71. Հետևյալ ձևով խոնարհեցնք առաջարկել, ստանալ, ընտրել, աշխատել և կարդալ բայերը։

Ն Ե Ր Կ Մ			
Դրական	Ժխտական	Դրական	Ժխտական
Գրում եմ	Չեմ գրում	Գրեցի	Չգրեցի
Գրում ես	Չես գրում	Գրեցիր	Չգրեցիր
Գրում ե	Չի գրում	Գրեց	Չգրեց
Գրում ենք	Չենք գրում	Գրեցինք	Չգրեցինք
Գրում եք	Չեք գրում	Գրեցիք	Չգրեցիք
Գրում են	Չեն գրում	Գրեցին	Չգրեցին
Գրիր	Մի՛ գրիր	Գրում եյի	Չեյի գրում
Գրեցեք	Մի՛ գրեք	Գրում ելիր	Չելիր գրում
		Գրում եր	Չեր գրում
		Գրում եյինք	Չեյինք գրում
		Գրում ելիք	Չելիք գրում
		Գրում ելին	Չելին գրում

Ա. Պ Ա Ռ Ա Բ	
Դրական	Ժխտական
Գրելու յեմ	Չեմ գրելու
Գրելու յես	Չես գրելու
Գրելու յե	Չի գրելու
Գրելու յենք	Չենք գրելու
Գրելու յեք	Չեք գրելու
Գրելու յեն	Չեն գրելու

Է. ԲԱՅԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ ԺԽՏԱԿԱՆ ՉԵՎՔ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 72. Կարդացնք և ասացնք՝ ի՞նչ տարբերություն կա գծի աջ և ձախ կողմում տաղված նախադասությունների միջև։

Գնան անտառ:	Մի՛ գնան անտառ:
Խոսիր ու պարիր:	Մի՛ խոսիր ու մի՛ պարիր:
Խաղա ու զբոսնիր:	Մի՛ խաղա ու մի՛ զբոսնիր:

Բայի հրամայական ձեի ժխտականը կազմվում է մի արգելականով։

Բայի հրամայական ձեի շեշտը գրվում է մի՛ արգելականի վրա։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 73. Կազմեցնք ծիծանկելու գատկել, նստել, զատկել, սպառնալ բայերի հրամայականները և հրամայական ժխտականները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 74. Արտադրեցք և դրեք հրամայական-
ների շեշտը համապատասխան տեղերում:

Առավոտը շուտ վեր կաց, հագնվիր, լվացվիր, նախա-
ճաշիր և գնա դպրոց: Դասի զանգը տալուն պես մտիր
դասարան և նստիր տեղդ: Ուշադրությամբ լիր ուսուց-
չին և կատարիր նրա հանձնարարությունները: Դասամի-
ջոցներին մի մնա դասարանում, մի վազվիր միջանցքում,
մի խանգարիր ընկերներիդ խաղերը ընդհակառակը, մա-
քուր ողի մեջ դու ինքդ կազմակերպիր կուլտուրական
խաղեր: Դասերից մի ուշանա:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 75. Հետեւյալ վոտանավորից ջոկեցք բա-
յերը և դարձրեք հոգնակի հրամայական:

Ստալինյան դու ողաչու, թոկիր, սուրա դեպի վերի,
ձախրիր ողում, խաղեր արա, վորպես բազե յեթերաթե,
Յեկայնտեղից նայիր, դիտիր սահմանները ազատ
յերկրի,
վոր չլինի մեր դեմ դավե նենգ ու խարդախ, լիըը
թշնամին:
Իսկ յերը տեսար՝ փորձ են անում թեվակոխել սահմանից
ներս,
Խվիր, ջարդիր, շանթահարիր անկոչներին այն սկերես:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 76. Հետեւյալ վոտանավորից ջոկեցք բա-
յերը և դարձրեք յեղակի թիվ հրամայական:

Հեյ, ծլեցք ու ծաղկեցք,
Վառ բուրավետ ծաղիկներ,
Զեր գույներով զարդարեցք
Հայրենիքս վոսկեհեր:
Յեկ գուք, զարնան ջրեր վարար,

Կարկաչեցիք, հոսեցէք,
Վես սարերից սահեցէք վար,
Դաշտ ու այգի ջրեցէք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 77. Արտադրեցք հետեւյալ հոդվածը: Հրա-
մայականի վրա դրեք շեշտ:

Յեղիր հարվածային, պահպանիր պետական գույքը,
հաճախիր ակումբ և կարդա գեղարվեստական գրքեր: Ու-
նեցիր քո որվա ուժիւմը և խիստ կերպով պահպանիր նրա
կանոնները: Ժամանակին քնիր և ժամանակին վեր կաց:
Ամեն առավոտ մասնակցիր լիցքային մարզանքներին: Ակ-
տիվ կերպով մասնակցիր հասարակական աշխատանքներին:
Ժամանակին կատարիր քո բոլոր պարտականությունները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 78. Ինքներդ կազմեցք 5 նախադասու-
թուն հրամայական և 5 նախադասություն արդելական ձեր
բայերով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 79. Հետեւյալ վոտանավորից ջոկեցք հրա-
մայական ձեր բայերը և վորոշեցք նրանց դեմքն ու թիվը:

Եյ, հսկեցք, ինչ եք քնում,
Քաջ զինվորներ թաթուլի.
Ո՞վ ե, տեսեք, տանջվում մինում,
Քուն չի աչքին մոտ գալի:
Վեր կացեք, վեր, ամբողջ գիշեր
Մարդ ե զնում ու գալի,
Հեյ, զարթնեցք, առյուծ քաջեր,
Պահապաններ թաթուլի:

Վեր կացեք, վեր, հարսեցըել ե
Իր հաղթական հյուրերին,

Բայ ե անուն դուռն ու դարստի
Զեր դափաճան տիրուհին:

Դավուս պատրիարքը պահնակ է կոչնակ և
Զենք առեք զուտ ձի հեծեք, ձին...
Ճռնչում են, դղրդում են
Գարպասները յերկաթի...

(2. 10.)

Որինակ՝ Հոկեյեք—հոգնակի թիւ, յերկըորդ դեմք։

Պ. ԲԱՅԻ ԱՆՈՐՈՇ ԶԵՎՀ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 80. Հետևյալ նախադասություններից արագագործեցնք այն բառերը, վորոնք պատասխանում են ի՞նչ անել և ի՞նչ լինել հարցերին:

(Ի՞նչ ի՞նել) լինել մաքրասել:

(հայոց լինել) դառնայ հարվածային:

Հաջորդ աշխատանքների համար (լինչ անել) պատրաստվել ժամանակին:

(հ՞նչ անել) բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը:

(ի՞ո՞նչ անել) պահպանել կարդալու առողջապահական
կանոնները:

Քըսկոր աշխատանքները (ի՞նչ անել) կատարել թարմ ժամանակի:

Յուրաքանչյուր ժամ աշխատելուց հետո 15 ըսպե

(ի՞նչ անել) դադար առաջ
(ի՞նչ անել) դառնալ որինակելի աշակերտ:

Բայի այն ձեր, վորը պատասխանում ե ի՞նչ ա-
նել կամ ի՞նչ լինել հարցերին, կոչվում ե բայի ա-
նորու ձե:

Բայի անողոք ձևն ունենում ե ել կամ ալ վեր-
ջավորությունը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 81. Արտազրկեցէք հատկյալ նախադասությունների բայերը՝ անորոշ ձեի վերածելով:

- | | |
|--------------------------------|----------------------|
| 1. Լսիլ ուսուցչին | 1. Լսել ուսուցչին |
| 2. Պատրաստիլ դասերդ | 2. |
| 3. Մամնակցիր աշխատանքներին | 3. |
| 4. Դարձիր հարվածային | 4. |
| 5. Յենթարկվիր կարգություններին | 5. |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 82. ՀԵՏԿԵՐԱԾ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ արտադրելիս կետերի տեղը գրեցէք վակագծերում տրված հարցերին պատճառիսանող բայերն իրենց անորոշ ձևով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 83. Ինքներդ կազմեցեք 5 նախադասություն անողության անողության մասին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 84. Հետեւյալ բայերով կազմեցէք Դ նու
խաղասություն՝ բայերը գործածելով անորոշ ձևով, և Դ նախա-
զառություն՝ խոնարհած ձևով:

(Գրել, վագել, նստել, գնալ, խաղալ, լվացվել, հազնվել):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 85. Այս վոտանավորից չովեցէք բայերը
և նրանց դիմաց նշանակեցէք դրական, ժխտական և անորոշ
ձևերը:

Նրա հերը չի գալիս, ծերունի յե համառու.
Աշխարհը չի կործանվի մի ծերունու համարու
Բայց մնաք ունենք իրավունք Աղեքսանին վանել,
Բախտը կտպել պարագին, ապագան սպանել:
Յես բնագ չեմ կամկածում Ալեքսանի վրաւ
Ինձ հարսնի յե մանրաժամն պատմությունը նրատ
Նա կոլխոզի շարքերում մնա հետ կը պայքարի:
Չի հեռանա, չի փախչի կիսամանապարհից:
Նա յեկել ե բանակից, նա մ' բվել ե մերոնց.
Յեզ նա կարող ե դառնալ տուշավոր հերոս:
Նա իր հրըն ել կրերի մի ժամանակ հետո.
Քեռի Հովասն ել կդա իմ խոր տհսակետով:
(Ն. Զարյան)

Որ. Չի գալիս—ժխտական ձե և:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 86. Արտագրեցէք հետեւյալ վոտանավորը՝
բայերը ժխտականի վերածելով:

Յեվ դալար հովիտ, և ժալոի կրծքեր
Արձագանք տալով գարուն են հնչումք
Զմրան փարախից հովվական յերգեր
Զեփյուռի թեռով սարերն են թոշումք:
Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի
Բացվում ե, ժպտում կոկնից զվարթ,
Փարթամ գեղության վոգին Գուգարքի

Շնչում ե գարնան բույրով անաղարտ.
Ամպերն ել իրար համբուլցներ տալով,
Զվում են կալտառ, կալվարը գրկում,
Առաջին անգամ խիստ վորոտալով
Գուգարք աշխարհին վողջույն են յերգում:
(Վ. Միքայել)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 87. Հետեւյալ վոտանավորից ընտրեցէք
բայերը և նրանց առաջ գրեք անձնական գերանունները՝ համա-
պատասխան թվով և գեմքով:

Դավիթը յեկավ կանգնեց մեյդանում.
Վահ, ես քաղըցիք ինչ վաղ են քընում:
Հեյ կովատեր, հեյ գոմշատեր,
Յելեք շուտով, բացեք զըռներ,
Ով մինն ուներ—տասն եմ բերել,
Ով տասն ուներ—քսանն արել,
Շուտով յելեք, յեկեք տարեք,
Զեր յեզն ու կով գոմերն արեք:
Տեսավ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Խնքն ել մեկնըցից քաղըի մեյդանում,
Գլուխը դրեց մի քարի, մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց:
(Հ. Թ.)


Որինակ՝ նա յեկավ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 88. Արտագրեցէք բայերը և դիմացը գրե-
ցէք դեմքը, թեվը և ժամանակը:
Յեվ գինամիտն անտառում առավոտյան վորոտաց,
Սանթրոսի տան քարաշեն պատերն ահով դողացին:
